ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 09.01.2019թ. N 01/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.02.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Խաչատրյանը, Հ.Նաջարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Աճուրդի ամփոփման արդյունքների մասին
1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ավետիսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Տերյան 19-4)

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ որը կազմված է հրավերի պայմաններին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Պլանավորված առավելագույն գինը ՀՀ դրամ
		«Այյունեթվորքս» ՍՊԸ	
1	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ	195 592 500	**235 000 000**

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց դիմում-հայտարարության՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը գնահատել բավարար:

2. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5.Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյան

Անդամներ՝ Ա.Խաչատրյան

Հ.Նաջարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան